ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3832-Ա « 04 » օգոստոսի 2026թ.

ՆՈՐ ԱՐԵՇ 39 ԿՎԱՐՏԱԼ ԹԻՎ 14 (ՆՈՐ ԱՐԵՇ 29-ՐԴ ՓՈՂՈՑ Հ.25) ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Վարդան Քաջոյանի դիմումը՝ Նոր Արեշ 39 կվարտալ, թիվ 14 (Նոր Արեշ 29-րդ փողոց հ.25) հասցեում գտնվող տնամերձ հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել «Հայաստանի Ազգային Արխիվ» ՊՈԱԿ-ի 2026 թվականի մարտի 27-ի հ.1929 և 2008 թվականի օգոստոսի 1-ի հ.01-20/1469 տեղեկանքները, Հայկական ՍՍՌ աշխատավորների դեպուտատների Երևան քաղաքի Լենինյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1960 թվականի փետրվարի 15-ի նիստի հ.3/75 որոշման արձանագրությունը և քաղվածքը, 2008 թվականի օգոստոսի 2-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի հ.6171, սեփականության իրավունքի հ.6170 վկայագրերը, դրանցում ուղղում կատարելու մասին տեղեկանքը, 2024 թվականի հունիսի 27-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի հ.1736 վկայագիրը, 1960 թվականին տրված հատակագիծը, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հ.հ.ԱՏ-29052026-01-1226, ԱՏ-01102024-01-0827 և ԱՏ-27092024-99-0035 տեղեկանքները, «Արամ Աջաբխանյան Գևորգի» ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի հատակագիծը:

Համաձայն ներկայացված տեղագրական հանույթի քննարկվող հասցեում գտնվող տնամերձ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 229.37քմ՝ 1960 թվականի գլխավոր հատակագծով հատկացված 248.4քմ մակերեսի /(27.6x18.0):2/ փոխարեն: Հողամասն ունի ուղղանկյուն եռանկյան ուրվագիծ՝ 27.6մ և 18.0մ էջերով:

Քննարկվող հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ Երևան քաղաքի հողերի տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 6-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշի-նության վարչության 2026 թվականի հունիսի 4-ի հ.Դ-48339-26 եզրակացությունը.

1. Սահմանել, որ Նոր Արեշ 39 կվարտալ, թիվ 14 (Նոր Արեշ 29-րդ փողոց հ.25) հասցեում գտնվող հողամասի (տնամերձ) սահմանները որոշվում են 229.37քմ մակերեսի համար սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունների պետերի ու Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246